

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ
ԹԻՖԼԻՍԻ «ՄՇԱԿ» ԹԵՐԹՈՒՄ (1879-1881)

Գր. Արծրունու «Մշակը» մշտապես եղել է ուղենիշ՝ ներկայացնելու անցյալի գաղտնիքները, ներկայի հրատապ խնդիրները և ապագայի անելիքները: «Մշակը» գծել է մի կայուն և մշակված ծրագիր՝ վեր հանելու ժողովրդին հուզող և օրախնդիր դարձած հարցերը: «Այդ ծրագիրն էր ղեկավարել հայ հասարակական միտքը յառաջադիմական ուղղությամբ, սերմանել ժամանակակից գաղափարներ, որոնցով միայն հայ ժողովուրդը պիտի կարողանայ տեղ գրաւել և ապրել յառաջադէմ ազգերի շարքում»¹: Անդրադառնալով ժողովրդի սոցիալ-տնտեսական, քաղաքական խնդիրներին՝ «Մշակն» իր ստեղծման օրվանից ուշադրությունը բնեռել է հայ ժողովրդի կրթական, մշակութային հարցերի վրա՝ փորձելով գտնել համապատասխան պատասխանները: Ասենք, որ շատ հարցերում լրագիրը նախաձեռնող էր: Գր. Արծրունին իր առաջնորդողներում հետազծում էր այն կարևոր կռիւները, որոնց իրականացումը կնպաստեր հայ իրականության բարեկարգմանը: Որպես օրինակ՝ նշենք, որ Գր. Արծրունու մտահղացման արդյունք են Կովկասյան համալսարան, Թիֆլիսի որբախնամ բարեգործական ընկերություն և այլ կարևոր հիմնարկություններ հիմնելու փաստերը: Լինելով առաջադիմական հայացքների կրող՝ «Մշակն» ամեն ինչ անում էր, որպեսզի օժանդակի ժողովրդի գոյապայքարին: Երբ հետևում ենք զարգացող իրադարձություններին և «Մշակի» արծագանքներին՝ հատկապես նրա առաջնորդողներում տեսնում ենք հետևյալ կայուն նախագիծը. հայ ժողովրդի գոյատևումը հնարավոր է միայն զենքի, կրոնի, լեզվի, մշակույթի ամուր միասնության ղեպքում: Ինչպե՞ս էր դա բացատրվում. ժողովուրդը պետք է միշտ վառ պահի ազատատենչ ոգին և երբեք ձեռքից բաց չթողնի զենքը, ժողովուրդը պետք է պինդ պահի իր մշակույթը, լեզուն, կրոնը:

Այսինքն՝ մի կողմից զենքը, մյուս կողմից հոգևոր զարթոնքը, մշակույթը, որով ժողովուրդը գոյատևել է դարերում, որը զենքին հավասար ուժ ունի: Այս երկուսի միասնությունն է ժողովրդի գոյատևման գրավականը: Իսկ մշակույթը ապագա սերունդներին հասնում է գրքի միջոցով: Եթե միջնադարում գրիչներն

¹ Տես Դանիելյան Լ. «Մշակի» քառասունյակ (1872-1912). Թիֆլիս. տպ. «Ջերմես», 1912, էջ 6:

էին ստանձնել նշակույթը սերունդներին փոխանցելու դժվարին գործը, ապա այժմ այդ ծանր, բայց պատվարժան գործը կատարում են հրատարակիչները, գրողները: Ուրեմն պետք է օժանդակել հայ իրականության մեջ գրքի ստեղծման, տպագրության գործին՝ որպես ապագան կերտելու լավագույն երաշխիք: Սա «Մշակի» թիվ մեկ խնդիրներից մեկն էր, որի իրականացմանը չժել էր և՛ խմբագիրը, և՛ ամբողջ խմբագրակազմը: Սա նպատակն էր, Արծրունին կազմում է նաև ծրագիրը.

1. «Մշակի» մեջ ներկայացնել Թիֆլիսում, Ռուսաստանում, Անդրկովկասում, Թուրքիայում և հայաշատ վայրերում առկա գրատպության իրական պատկերը:
2. Անդրադառնալ այն կարևոր խնդիրներին, որոնք խոչընդոտում են այդ կարևոր գործի իրականացմանը:
3. Ներկայացնել տվյալ ժամանակաշրջանում հրատարակվող գրքերը, նրանց բովանդակությունը, նպաստել հասարակության կողմից նրանց ճանաչմանը, գնահատմանը և իրացմանը:

Ծրագրի այս կետերին անդրադարձել ենք ավելի մանրամասն՝ ուսումնասիրելով 1879-1881թթ այս թեմային վերաբերող նյութերը:

Ինչու՞ էր Գր. Արծրունին իր գործունեությունը սկսել Թիֆլիսում, ոչ այլ քաղաքում և ինչու՞ էր նա ավելի շատ ուշադրությունը կենտրոնացրել Թիֆլիսի հայ գրահրատարակչական գործի զարգացման վրա: Հարցի պատասխանը տալիս է հենց ինքը իր առաջնորդողներից մեկում. «Գործը, լրագրողը իր գրական գործունեութեան մեջ պետք է ապրի մի հասարակութեան մեջ, որտեղ հասարակական կեանքը աւելի բազմակողմանի է: Եւ այդ է պատճառը, որ Ռուսաստանի հայերի մէջ գրական ասպարեզում գործել ցանկացողը ընտրում է իր գործունեւեյան համար Թիֆլիսի պես մի կենտրոն, որը ոչ միայն Անդրկովկասի, այլեւ ամբողջ Ռուսաստանի հայերի համար կենտրոն է»²: Արծրունու տեսակետին զուգադրենք նաև Րաֆֆու կարծիքը. «Թիֆլիսը իր այժմեան դրութիւնով մի կենտրոն է, ուր հանդիպում են մեր երիտասարդութեան բազմատեսակ տիպերը: Այնտեղ են գտնուում մեր մտաւոր գորութեան ներկայացուցիչները՝ մեր ինտելիգենցիան, այստեղ է գործում մեր մամուլը, այստեղ են խմբվում մեր նշանաւոր ուժերը»³: Ուրեմն Թիֆլիսում առկա էին բոլոր բարենպաստ պայմանները, որոնք անհրաժեշտ էին գրքի ստեղծման և հասարակական ճանաչման համար: Մնում էր ճիշտ կազմակերպել այդ

² Տես Արծրունի Գրիգոր. Աշխատում են առանձնացնել—Մշակ, Թիֆլիս, 1879, ք. 55, 19 ապրիլի, էջ 1:

³ Տես Րաֆֆի. Հայ երիտասարդութիւն—Մշակ, Թիֆլիս, 1879, ք. 204, 22 նոյեմբերի, էջ 1:

գործընթացը: Այս առաքելությունն իր վրա է վերցնում «Մշակը»: Նախ նա 1879թ.-ից սկսած իր առաջնորդողներում առաջ է քաշում հայերեն գրքերի հրատարակության ընկերություն ստեղծելու հարցը, նաև հայերեն գրքերի թարգմանական ընկերություն հիմնելու կարևորությունը: Այսինքն գիրք արարելու և այն աշխարհին ի ցույց դնելու հարցը: «Մշակի» նպատակամետ գործունեության արդյունքում 1879թ. ստեղծվում է թարգմանական ընկերությունը, մի փոքրիկ խմբակ, որի ճիշտ և անսխալ գործունեության հետևանքով այն վերաճում է մի մեծ ընկերության: 1880 թ. այն հրաժարվում է թարգմանական անունից և վերանվանվում «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության» ընկերություն: Իր կանոնադրությամբ ու ծրագրով: Կանոնադրությունը հաստատվում է 1880թ. փետրվարին Կովկասի փոխարքայի կողմից: Ստեղծման օրվանից ընկերությունը հայտնվում է «Մշակի» տեսադաշտում: 1880թ. մարտի իր առաջնորդողներից մեկում «Նոր ընկերություն» խորագրով Արծրունին ներկայացնում է ընկերության առաջին ժողովը, այնուհետև հաստատված կանոնադրությունը, որը հետագայում տպագրվում է առանձին գրքույկով: Չնայած 1881թ. մի քանի անգամ լրագրի մեջ տպագրվում են հոդվածներ, որոնք դատապարտում են ընկերության այս կամ այն սխալը, այնուամենայնիվ «Մշակը» միշտ բավարար է համարել ընկերության գործունեությունը: 1881թ. Գաբրիել Միրզոյանը «Մշակի» բանասիրականում հանդես է գալիս մի հոդվածով, որով դատապարտում է ընկերությանը ֆինանսական խնդիրներից լրջությամբ չանդրադառնալու և դրանք հասարակությունից թաքցնելու մեջ: Նա գրում է. «Կը ցանակայի տպած տեսնել Թիֆլիսի ընկերութեան տարեկան մանրամասն հաշիւը: Անկասկած՝ մեր հասարակութեան ամեն մի անդամ անհամբեր սպասում է մի օրինաւոր հաշուի, որով կարելի կը լինէր իմանալ, թէ ինչ դրութեան մէջ են մեր ընկերութեան նիւթական միջոցները»⁴: Նպանատիպ հոդվածներ 1881թ. տպագրվում են մի քանի անգամ: Սակայն ինչպես գրում է Լեոն իր գրքում. «Արծրունին երբեք ուշադրութիւնից չէր զգում այդ ընկերութեան ստեղծման կարելոր հանգամանքը»⁵: Ոգևորված այս ընկերության հաջողությամբ՝ 1881թ. հրատարակչական ընկերություն են հիմնում նաև Շուշիում: Սա ևս «Մշակի» ձեռքբերումն էր: Այնուհետև լրագիրը հաղես է գալիս հայաշատ այլ վայրերում ևս նման ընկերություններ ստեղծելու առաջարկով: Նպատակը մեկն էր՝ առավելագույնս նպաստել գրքերի և հայերեն լեզվով մամուլի տպագրության գործին:

⁴ Ավելի մանրամասն տես Միրզոյան Գաբրիել. Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակութեան ընկերութիւն.-Մշակ, Թիֆլիս, 1881, թ. 88. 16 մայիսի, էջ 2

⁵ Լեո. Գրիգոր Արծրունի. հտ. 3, Թիֆլիս, տպ. «Յերմես», 1905, էջ 17

«Մշակի» հաջորդ քայլը հրատարակչական գործին խոչընդոտող խնդիրներին անդրադառնալն էր: Դրանցից առաջինը տպարանների խնդիրն էր: Արծրունին իր առաջնորդողներում առաջ էր քաշում նոր տպարաններ ստեղծելու հարցը: Որքան շատ լինեին դրանք, այնքան շատ կլինեին գրքեր տպագրելու հնարավորությունը: 1881թ. նա հանդես է գալիս «Թարգմանական ընկերություն» խորագրով առաջնորդողով, ուր ուշադրություն է դարձնում հայ ազգի մեջ ընթերցանության նկատմամբ առկա անտարբերությանը, ինչպես նաև տպարանների ու հրատարակիչների գործունեությանն ու խնդիրներին: Իսկ առավել շատ նրանց մասին խոսում է լրագրի ներքին լուրեր բաժնում: Տպարաններ կային և՛ Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում, և՛ Թիֆլիսում, և՛ հայաշատ այլ վայրերում: «Մշակն» իր էջերում ներկայացնում էր այդ բոլոր վայրերի տպարանների արտադրանքը և նրանց առջև կանգնած խնդիրները: Իհարկե ուշադրության կենտրոնում միշտ Թիֆլիսն էր, քանզի. «19-րդ դարի երկրորդ կեսերից մինչև 20-րդ դարի 20-ական թվականները Թիֆլիսը որպես հայկական տպագրության օջախ բացառիկ տեղ էր գրավում հայ գրքի ու տպագրության պատմության մեջ»⁶: Այդ ժամանակաշրջանում գործող տպարանների մասին տեղեկանում ենք ոչ միայն նրանց մասին գրված լուրերից կամ հոդվածներից, այլև գրքերի վաճառքի կամ տպագրության հայտարարություններից, որոնցով հազեցած են «Մշակի» էջերը: Հայտարարությունների վերջում մեծ մասամբ նշվում էր վաճառքի գինը և տպարանը: Այս հայտարարություններից տեղեկանում ենք, որ այդ տարիներին շատ ակտիվ են գործել Թիֆլիսում Զ. Սարտիրուսյանի, Սիխելսոնի, Զ. Էնֆաճյանց և ընկ. տպարանները, Երևանում՝ Զաքարիա Գևորգյան և ընկ. տպարանը, Նոր-Նախիջևանում՝ Զ. Տեր-Աբրահամյանի տպարանը, Բաքվում՝ Հայոց Մարդասիրական ընկերության տպարանը, Մոսկվայում Ե. Գուլդիլովիչի տպարանը, Ռոստովում՝ Տեր-Աբրահամյանի տպարանը և այլն:

«Մշակը» չէր բավարարվում միայն տպարանների գործունեության հետ ծանոթացնելով, այլև ուշադրություն էր դարձնում խնդիրներին, հատկապես տպարանների նյութական միջոցներին ու ֆինանսական հարցերին: Ֆինանսական խնդիրների պատճառով հրատարակչական գործը կարող էր կանգ առնել, և «Մշակը» ամեն ինչ անում էր հովանավորների միջոցով գտնելու համապատասխան միջոցները: Օր. Երբ հրատարակվում է Սյուլուկի (Ռաֆայել Պատկանյանի) «Նոր-Նախիջևանի քնարը», Մ.Թյությունջյանը «Մշակի» բանասիրականում տպագրում է իր գրախոսականը, որի մեջ նշում է

⁶ Տես Բաբայան Արամ. Հայ գիրքը և տպագրությունը, Ե., Հայպետհրատ, 1963, էջ 103

ման. «Գի՜նը 1 բուբլի, կարելի էր չափազանց սուղ անուանել, եթե գրքոյկը հրատարակված չը լինէր ի նպաստ բարեգործութեան: Ես հաստատ գիտեմ, որ գրուածքի տպագրութիւնը աւելի լավ եւ թուղթը աւելի հաստ կը կի՜նէին, եթէ այդ կախված լինէր հեղինակի ցանկութիւնից, բայց Տէր Աբրահամեանը (հրատարակիչը) թեւէ շատ գովելի հատկութեանց տէր է, սակայն իբրեւ հայ ազատ չէ հայի մի սովորական պակասութենից, այսինքն՝ զիջողութիւն չա՜նել մահ այնպիսի գործերում, որոնք միայն բարեգործական նպատակով ազգի համար են ձեռնարկուած»⁷: Կամ երբ տպագրվում է Ն. Տէր-Ղևոնդյանի հաշվետվությունը «Մայրենի լեզու» գրքի տպագրութեան վերաբերյալ, նշվում է մահ տպարանատեր Մարտիրոսյանին տրված գումարը. «Երկու զաւօղ տպագրելու համար 24 ռ.»։ Իսկ ներքևում նշում է, որ տպագրութեան ծախսած գումարը նվիրել է Գրիգոր Արծրունիին⁸: Նմանատիպ հոդվածներով «Մշակը» ջանում էր ամեն կերպ օժանդակել և պատկերացում տալ գրահրատարակական գործի մասին: Եվ ինչպէս նկատում ենք, Արծրունին առաջիններից էր, որ սեփական միջոցներով ջանում էր օգնել նյութապէս անապահով մտավորականությանը:

Բացի սրանից «Մշակը» ուշադրություն էր դարձնում տպագրութեան որակին: Իր հրապարակումներում մահ անընդհատ նշում էր, թէ տվյալ գիրքը կամ թերթը որակյալ է, անորակ, պատկերազարդ, մեծ կամ փոքր տառերով, անդրադառնում էր տպարանների ներսում գոյություն ունեցող մարդկային հարաբերություններին, կենցաղային խնդիրներին, որոնք ճիշտ է առանձին որևէ նշանակություն չունէին, բայց ընդհանուր ներկայացնում էին այդ տարիներին գոյություն ունեցող հարաբերությունները:

Շատ կարևոր է «Մշակի» առաքելությունը մահ հրատարակված գրքերի թերթերի ամսագրերի ճանաչման և հասարակութեան մեջ ընդունելություն գտնելու գործում: Ժամանակաշրջանը բարդ էր, սոցիալ-տնտեսական, քաղաքական բարդ հարաբերությունները հայ ազգի ուշադրությունը ավելի շատ կենտրոնացրել էին գոյատևման խնդրի շուրջ, և շեղել մահ գրքից: Պարբերական մամուլը ավելի շատ պահանջարկ ուներ, քանզի տեղեկատվություն էր պարունակում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին, մինչդեռ գիրքը անուշադրութեան էր մատնված: Արծրունին գրում էր, որ լրագրերն ու գրքերը հայ իրականութեան մեջ չունէին իրենց արժեքը: Թիֆլիսում գիրք տպագրելը հերոսություն էր, քանի որ ծախսված գումարներ

⁷ Տես Մշակ, Թիֆլիս, 1879, թ. 96, 19 հունիսի, էջ 1-2

⁸ Տես Մշակ, Թիֆլիս, 1879, թ. 102, 27 հունիսի, էջ 1-2

չէին վերադարձվում: Դրա համար հեղինակը պետք է բաժանորդագրեր գիրքը կամ մաս-մաս հրատարակեր⁹: Ի՞նչ ծրագիր էր մշակել «Մշակը»:

1. Առաջին հերթին ներկայացնում էր հրատարակված գրքերը իր ներքին լուրեր և հայտարարություններ բաժիններում: Ներկայացնում էր հայաշատ բոլոր վայրերում տպագրված բազմաբովանդակ և օտարալեզու գրքերը:

2. Կազմակերպում էր հատուկ տեսություններ, որոնց մեջ բացահայտվում էին առավել արժեքավոր գրքերի բովանդակությունները:

3. Իր բանասիրական բաժնում պարբերաբար տպագրում էր գրախոսաաններ կամ պարզապես հոդվածներ, որոնցով նշում էր տվյալ գրքի առավելություններն ու թերությունները:

4. Կազմակերպում էր բաժանորդագրությունը: Սա օգնում էր որպեսզի գիրքն ունենա իր հասցեատերը, հեղինակը կամ հրատարակիչը նախապես պատերոցում ունենային, թե քանի օրինակով պետք է հրատարակվի գիրքը: Օր. Բաֆֆին իր «Կայծերը» հրատարակելու համար 1879թ. «Մշակում» հայտարարություն է տպագրում, որ 1880 թ. իր վեպը լույս կտեսնի և ցանկացողներ կարող են բաժանորդագրվել:

5. Արժույնին կարևորում էր գրախանութների դերը, որոնք կնպաստեին ընթերցասիրության բարձրացմանը: Իր «Մի առաջարկություն» հոդվածում նա առաջարկում էր գրախանութներ բացել նաև գյուղերում, որպեսզի նրանք էլ հնարավորություն ունենային շփվելու գրքի հետ¹⁰: Այդ տարիներին Թիֆլիսում ճանաչում ունեին Ջաք. Գրիգորյանցի գրախանութը և Կենտրոնական գրաձառանոցը, որոնց գործունեությանը «Մշակը» պարբերաբար անդրադառնում էր և իր հայտարարություններ բաժնում միշտ տպագրում, թե ինչ նոր գրքեր կամ լրագրեր են ստացվել գրախանութներում:

6. «Մշակը» կարևորում էր նաև գրադարանների դերը: Գրադարան-մատենադարան - ընթերցարանները պետք է դառնային այն վայրերը, որոնք դեպի իրենց կծգեին ընթերցասեր հասարակությանը, նրանց, ովքեր չունեին համաատասխան ֆինանսական միջոցները, բայց սիրում էին կարդալ:

Ահա այն կարևոր հարցերը, որոնց իրագործմանը լծվել էր լրագիրը իր ստեղծման օրվանից՝ գրքի պրոպագանդա, գրքի ստեղծում, գրքի փառաբանում: Կարծում ենք, որ «Մշակի» գործունեությունը այս ոլորտում անփոխարինելի է, արդյունքն՝ անգնահատելի:

⁹ Ավելի մանրամասն տես Արծրունի Գրիգոր. Հասարակութան անտարբերությունը - Մշակ, Թիֆլիս, 1879, թ. 218, 13 դեկտեմբերի, էջ 1

¹⁰ Տես Մշակ, Թիֆլիս, 1879, թ. 120, 24 հուլիսի, էջ 1-2